

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի Համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

2016 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000 թվականի փետրվարի 11-ի Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին» Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան,

ձգտելով ռազմատեխնիկական համագործակցության հետագա զարգացմանը և «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի շրջանակներում կոոպերացիայի մակարդակի բարձրացմանը,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

### Հոդված 1

«Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) վերնագրում՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով,

2) նախաբանում՝ առաջին պարբերությունը՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարությունը» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերով,

երկրորդ պարբերությունը համարել ուժը կորցրած,

3) 1-ին հոդվածում՝

1-ին կետում՝

«աջակցում են ստեղծմանը» բառերից հետո ավելացնել «և զարգացմանը» բառերը,

«բելառուսական ձեռնարկությունների և կազմակերպությունների» բառերը փոխարինել «Կողմերի պետությունների կազմակերպությունների» բառերով,

2-րդ կետի երկրորդ պարբերությունում «Ռուսաստանի Ղաշնության և Բելառուսի Հանրապետության օրենսդրություններով» բառերը փոխարինել «Կողմերի պետությունների» բառերով,

3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ղեկավարման բարձրագույն մարմինը հանդիսանում է Կառավարիչների խորհուրդը: Կառավարիչների խորհրդի նախագահը հանդիսանում է ռուսական կողմի ներկայացուցիչը, նախագահի տեղակալներն են՝ սույն Համաձայնագրի մյուս Կողմերի ներկայացուցիչները: Նշված պաշտոնատար անձինք նշանակվում են Կողմերից յուրաքանչյուրի կողմից:»,

4) 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

## «Հոդված 2

Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման և զարգացման հիմնական նպատակը համարվում է դրա մասնակիցների գիտատեխնիկական, արտադրական և ներդրումային ներուժի առավելագույն օգտագործումը ռազմական, երկակի և քաղաքացիական նշանակության արտադրանքի բարձր տեխնոլոգիական և մրցունակ նմուշների ստեղծման և արտադրման ուղղությամբ, ինչպես նաև նշված արտադրանքի գոյություն ունեցող նմուշների նորոգման և արդիականացման ուղղությամբ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) համար:»,

5) 3-րդ հոդվածում՝

առաջին պարբերությունում՝

«մասնակիցների կազմի մեջ մտնող ձեռնարկությունները և կազմակերպությունները» բառերը փոխարինել «մասնակից կազմակերպությունները» բառերով, «ֆինանսաարդյունաբերական խմբերի մասին Ռուսաստանի Ղաշնության օրենսդրությամբ և Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Կողմերի պետությունների օրենսդրություններով» բառերով,

«Նշված» բառից հետո լրացնել «բաց» բառը,

երկրորդ պարբերությունում՝ «Բելառուսի Հանրապետության տարածքում (ք. Մինսկում) իր ներկայացուցչությունը» բառերը փոխարինել «Կողմերի պետությունների տարածքներում իրենց ներկայացուցչությունները» բառերով:

6) 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

## «Հոդված 4

Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակից-կազմակերպությունների կողմից՝ իր ծրագրերի իրագործման շրջանակներում ռազմական, երկակի և քաղաքացիական նշանակության արտադրանքի նմուշների ստեղծման և արտադրման, ինչպես նաև նշված արտադրանքի առկա նմուշների նորոգման և արդիականացման ուղղությամբ աշխատանքների կատարումը (ծառայությունների մատուցումը), փոխադարձ մատակարարումները իրականացվում են Կողմերի պետությունների օրենսդրություններով սահմանված կարգով:»:

- 7) 5-րդ հոդվածում.  
առաջին պարբերությունը հանել,  
երկրորդ պարբերությունում`  
«մասնակիցներին» բառը փոխարինել «մասնակից կազմակերպություններին»  
բառերով,  
«միջոցներ» բառը հանել,  
«անհրաժեշտ» («необходимых») բառը փոխարինել «անհրաժեշտ»  
(«необходимой») բառով,  
«դրա» բառը հանել:
- 8) 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

### «Հոդված 6

Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակից կազմակերպություններն իրենց պետություններին և/կամ իրենց պետությունների ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց պատկանող մտավոր գործունեության արդյունքների օգտագործման հետ կապված իրենց աշխատանքի ընթացքում առաջնորդվում են այդ բնագավառում այն միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցներն են իրենց պետությունները, ինչպես նաև իրենց ազգային օրենսդրություններով:»:

9) 7-րդ հոդվածում «մասնակիցները պատասխանատվություն են կրում խմբի գրանցման վայրի պետության օրենսդրությանը համապատասխան» բառերը փոխարինել «մասնակից կազմակերպությունները պատասխանատվություն են կրում միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի գրանցման վայրի պետության օրենսդրությանը համապատասխան:» բառերով:

10) 8-րդ և 9-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրություններով.

### «Հոդված 8

Սույն Համաձայնագիրը դրա ուժի մեջ մտնելուց հետո բաց է դրա նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար` սույն Համաձայնագրի Կողմերի և միացող պետության կառավարության միջև համապատասխան արձանագրություն կնքելու միջոցով: Այդպիսի արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո միացող պետության կազմակերպություններն ընդգրկվում են միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի կազմի մեջ:»:

### «Հոդված 9

Կողմերը կազմակերպում են սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում ստացվող կամ ձևավորվող գաղտնի տեղեկատվության փոխանցումը և օգտագործումը, և ապահովում են դրա պաշտպանությունը, այդ թվում` սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում` գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին երկկողմ, բազմակողմ միջազգային պայմանագրերին և 2004թ. հունիսի 18-ի` Հավաքական անվտանգության մասին

պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության փոխադարձ ապահովման մասին համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև իրենց պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ստացված տեղեկատվությունը չի կարող օգտագործվել ի վնաս Կողմերից յուրաքանչյուրի պետության շահերի:»:

11) 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

### «Հոդված 12

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը, նախապես կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ընթացքում այդ Կողմի համար ծագած պարտավորությունները, կարող է դուրս գալ դրանից՝ իր այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով մյուս բոլոր Կողմերին: Սույն Համաձայնագրի գործողությունն այդ Կողմի համար դադարում է այդպիսի ծանուցումը բոլոր Կողմերի ստանալու օրվանից 6 ամիս անց:»:

### Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, սակայն ոչ շուտ, քան 2016 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին» Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 30-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի  
Հանրապետության  
կառավարության կողմից՝

Ռուսաստանի  
Դաշնության  
կառավարության կողմից՝

Բելառուսի  
Հանրապետության  
կառավարության կողմից՝